ցութչան հայտնի վորոշումներն խորհ. ուսուցչի նկատմամբ Սակաջն պարտադիր ուսուցման թերազնահատման չերևուցի չեզակի չե, նա տարբեր վարիանտներով և արտահայտվում աջ ուսուցչուհիստների մոտ: Մի ուրիշ բերեալներ Դիլիջանից գրում և «պարտուսման շտաբը նախագահութեամբ շրջգործկոմի նախագահի բացարձակապես վոչինչ չի արել պարտ. ուսումնի շրջանումն ապահովելու համար: Մոտ չերկու ամիս և, վոր կազմակերպվել և շտաբ, բայց մինչև որս վոչ մի նիստ տեղի չի ունեցել և քննութեան չի առնվել պարտ. ուսման հետ կապված հրատապ խնդիրները. մեր աչն հարցին, թե անհրաժեշտ ենիստ գումարել և լսել բրիգադայի հետադոտման արդյունքները շրջանի պարտ. ուսման գրութչան մասին, շրջգործկոմի նախագահը ընկ. Գեթիկյանը պատասխանում և ռուրիշ հարց չունենք, վոր զբաղվենք պարտ ուսման խնդիրներով, ժամանակ չունենա՞նք աչ խնդրով զբաղվելու, զբաղվեցեք ինքներդ»:

Դժբախտաբար նման աջ ուսուցչուհիստական, անպատասխանատու վերաբերմունք հանգեալ կուսակցութեան մարտական գերեկտիվների կենսագործումը, հանգեալ խորհրդապետական ու անտեսական նշանակութուն ունեցող կամպանիան, վորպիսին և պարտ. ուսումը և անգրագիտութեան լիկվիդացիան յեզակի չերևութներ չեն. նման հանցավոր վերաբերմունք մենք հաճախ ենք հանդիպում պարտուսի ֆրոնտի գործնական ալ և ալ աշխատանքներում:

Յեթե խորհրդային մի շարք հանրապետութեաններում պարտ. ուսումն, անգրագիտութեան վերացումն ու պոլիտեխնիկական կրթութեանը Համկոմկոմսի վո-

րոշմամբ իրենց կարևորութեան և աշխատանքութեան դասիցին խորհրդ անտեսական ու քաղաքական նշանակութուն ունեցող կամպանիաների շարքը, ինչպիսին և հոցամթերման, բամբակացանի և ալ կամպանիաներ, ապա մեզ մոտ մի շարք շրջաններում պարտ. ուսման կամպանիան գրվեց յետին պլանի վրա, նա չգառնալ քաղաքական լուրջ կամպանիա, ալ նա համարվեց միայն սոց-կուլտ բաժնի գործ, ամեն ինչ թողնվեց ժողովուստավորութեան աշխատավորների վրա:

Չնայած մի շարք ուղղակի ցուցմունքներին ու հրահանգներին շրջգործկոմներին ու գլուխորհուրդներին կից պարտ. ուսման շտաբներ կազմակերպելու մասին, շտաբներ, վորոնք կոչված են լին լայն հասարակայնութեան ու մասերի ալ-բազա ստեղծելու պարտ ուսման անգրագիտութեան լիկվիդացիան և պոլիտեխնիկական կրթութեանն ապահովելու համար, դժբախտաբար շրջաններում շատ քիչ բան են արել աչ ուղղութեամբ: Շրջանների մեծագույն մասում շրջգործկոմներին ու գլուխորհուրդներին կից նման շտաբներ զեռու չեն կազմակերպվել, իսկ այնտեղ, վորտեղ այդպիսիները կազմակերպվել են, դրանք մնացել են թղթի վրա, դարձել են մեռած ժամերներ, առանց վորեիցե գործնական աշխատանքներ տանելու: Ահա թե ինչ են գրում պարտ. ուսումը հետադոտող բրիգադիւրները՝ «Շրջգործկոմներին կից կազմակերպված են պարտ. ուսման և անգր. վերացման շտաբ, բայց այս յերեք ամիս և, վոր այդ շտաբը վոչ մի նիստ չի ունեցել և պարտ. ուսման հետ կապված վոչ մի խնդիր քննութեան չի առել: Պարտուսի գործով զբաղվում են բացառապես լուսաշխատավորները և մասամբ կոմսո-

մուլը: Վոչ մի գյուղխորհուրդին կից չի կազմակերպված վոչ մի հանձնաժողով պարտուսմանն ոժանդակելու և նրա գաղափարները մասսայականացնելու համար: Պարտուսի մասսայականացման ամբողջ գործը թողնելված է միայն ուսուցիչներին և վորոշ տեղերում պիտո-ներենքին վրա: Կոտայերատիվ, տնտեսական օրգաններին մասնակցութիւնը պարտուսի գործում վոչնչով չի արտահայտվում: Շրջագործկոմիները մինչև որս այդ առթիվ վոչ մի հրահանգ գյուղխորհուրդներին, չեն ուղարկել: (Վաղարշապատ, Դիլիջան, Աշտարակ, Վեդի, Մարտունի, Աբարան, Գորիս և այլն):

Դրանով մասամբ պետք է բացատրել մի շարք շրջանների դպրոցաշինարարութեան, դպրոցական կահափորման թափթիվածութիւնը, վորոշ տեղերում ուղղակի բացակայութիւնը և չքավոր աշակերտութեան անախանձելի վիճակը, վորը խոշոր չափով վտանգում է պարտուսման գործը: Շնորհիվ շրջագործկոմիների և գյուղխորհուրդների աշխատանքներում տիրապետող ինքնահոսին, դպրոցական բաղմաթիվ կիսավարտ շենքերը տարիներով չեն ավարտվել և անձրևի ու ձյան տակ փշանում են, իսկ դպրոցները ստիպված են լինում պարապելու գոմիքում:

Շրջագործկոմիներն այսքան թեթևակի ու անհոգ վերաբերմունք ունեն դեպի դպրոցական շինարարութեան գործը, վոր հաճախ շինարարութեան վարկերը չեն ոգտագործվում, կամ ոգտագործվում են վոչ իրենց նախատեղին (Ստեփանավան): Մարդիկ կան, վորոնք գերադասելի յեն համարում դպրոցաշինարարութեանը հատկացված գումարները գործադրել զանազան գործողութիւնների, շրջագործկոմիների և գյուղխորհուրդների

համար գրասենյակներ շինելու, կամ ձի դնելու, քան թե կիսավարտ շենքերը ավարտել կամ նոր դպրոցական շենքեր պատրաստել (Վեդի, Դյուղքյանդ, Աշտարակ, Իջևան, Ստեփանավան): Յեղել են դեպքեր, յերբ 4 կիլո մետր համար նոր շինված դպրոցական շենքն ամիսներով չի ոգտագործվել և դպրոցը պարապմունք չի ունեցել ռոս տնգամ դիմել եմ շրջագործկոմին նախագահին մեխ բաց թողնելու համար, բայց չեն բաց թողել, դրա համար ել դպրոցի շենքը չենք կարող ոգտագործել—հայտնում է Իջևանի շրջանի Աղդան գյուղխորհրդի նախագահը:

Կենտրոնացված դպրոցական շենքերի պահանջը քաղաքներում նոգատակով, հրատարակեց հատուկ վորոշում ապակուլականացվածների դպրոցական աշխատանքներին պիտանի բնակարանները, ինչպես նաև նախկին դպրոցական շենքերը անհապաղ հատկացնել դպրոցներին, սակայն կան ախպիսի գյուղխորհուրդներ, կոլխոզվարչութիւններ և շրջագործկոմիներ, վորոնք ուղղակի չեն կատարել այդ վորոշումները և մինչև որս մնացել են անպատիժ: Ընդհանուրապէս հաճախ դպրոցական շենքեր են վերցնվում և հանձնվում ալ նախապահներին ոգտագործման համար: Վաղարշապատի շրջագործկոմի փոխ-նախագահը Սամազարի դպրոցական շենքը վարչական միջոցներով վերցնում է դպրոցից և հանձնում փոստին: Մի ուրիշ օրինակ՝ Ջարխոջ գյուղի կոլխոզի վարչութիւնը և կոմբիլի բլուրոն նույն գյուղի ապակուլականացման յանձնարկվածի դպրոցի աշխատանքներին միանգամայն պիտանի շենքը վեր է ածում կոլխոզի ախոռի, յերբ նույն այդ գյուղում յերկու խումբ աշակերտութիւն—շենք չլինելու պատճառ-

ուով, դուրս են մտնում դպրոցից: Նույն դրությունն է նաև ուսուցիչների նկատմամբ: Այսօր, չէրք մենք ունենք 100 ուսուցիչների պահանջ, և ժողովում խորհրդ այդ պահանջը բավարարելու նպատակով հատուկ վորոշում հանեց, ըստ վորի վոչ իրենց մասնագիտութիամբ աշխատող մանկավարժական ուժերը պետք է մտրիլիցացիայի յենթարկվելին և աշխատելին շրջոններում, տեղերում փոխանակ այդ վորոշումը կենսագործելու, լրացնելու ուսուցիչների պակասը, վորը խոշոր չափով անդրադառնում է պարտուսման աշխատանքների վրա, ընդհակառակը՝ մի շարք շրջգործկոմներ յերեմն նաև կոմսոմոլը մտրիլիցացիայի յեն յենթարկում ուսուցչին և ոգտագործում նրան վոչ իր մասնագիտութիամբ՝ շրջկոմի քարտուղար, ինֆորմատոր, գործավար և այլն: Այսպես որինակ՝ Վեդիի Շրջգործկոմը փակել է Հալիսա գյուղի դպրոցը և այնտեղի ուսուցչին վերցրել է շրջգործկոմի քարտուղար, Կոտայքի կոմսոմոլի շրջկոմը վերցրել է ուսուցչուհուն և դարձրել է ինֆորմատոր, և դա այն ժամանակ չէրք Կոտայքում պահանջ և զգացվում 5 ուսուցիչների:

Պարտադիր ուսուցումն կադրերով ապահովելու համար խոշոր նշանակութուն ունի ուսուցչության տնտեսաիրավական դրության բարելավումը: Իրա համար և կուսակցությունը և կառավարութունը հատուկ վորոշում ընդունեց ուսուցչությունը արգելադրելու և պակաս բանվորների միևնույնում ըսվարարելու առթիվ: Կուսակցության ու խորհրդային իշխանության վորոշումների հիման վրա, այսօր մենք արձանագրում ենք զգալի նվաճումներ, ուսուցիչների նյութական դրության բարելավման գործում, սակայն մենք դեռևս

չառ խոշոր թերություններ ունենք այդ ապարիլում: Տեղերում մի շարք կոոպերատիվ բյուրոկրատիկ ողակները հաճախ դիտավորյալ կերպով ուղղակի չեն կատարել կուսակցության վորոշումները՝ ուսուցիչների մատակարարման խնդրում, վորպեսզի դրանով լքում առաջացնեն ուսուցիչների մեջ և վիժեցնեն պարտադիր ուսումը: Կոոպերատիվի քյալլագող գործակատարները և հաճախ մինչև անգամ վարչությունները ուսուցիչների մատակարարման գործը իրենց քմահաճությամբ արևարհան են դարձնում: «Ուզեմ կտամ, չեմ ուզում չեմ տա» կամ «գյուղացին չի ստանում, դուք ինչու պիտի ստանա, ես յեկ ձեզ նման մարդ եմ» (կուլակն է խոսում այստեղ խորհրդային կոոպերատորի բերանով): Շատ հաճախ խախտվում են ուսուցիչներին տրվելիք զեֆիցիտային ապրանքների նորմաները և յերկար ժամանակով ձգձգվում է ուսուցիչներին կենսամթերքներով մատակարարելու գործը, վորի պատճառով ուսուցիչը ստիպված է լինում կելոն մեկ ուրելով հաց և 3 ուրելով շաքար գնել, կամ նա ստիպված է լինում որերով թողնել դպրոցը, գալ շրջկենտրոն հաց և այլ ապրանքներ ստանալու համար (Իջևան, Վաղարշապատ և այլն): Բարվոք չի կարելի համարել նաև ուսուցիչներին կոմսոմոլ ապաստիման գործը. տեղական գյուղխորհուրդները այդ ուղղութիամբ չեն զբաղվում, գտնելով վոր այդ իրենց ֆունկցիաների մեջ չի մտնում: Հաճախ ուսուցիչը բնակարանի, վառարանի, վառելիքի բացակայության պատճառով թողնում է դպրոցն ու հեռանում (Բասարգեչար, Սղաբա, Վեդի): Այդ առթիվ չէրք հարցնում ենք դյուրիտորհրդի նախագահին, նա պատասխանում է «այդ առթիվ

հրահանգ չեն ստացել: Յերբեմն ուսուցիչը պարտա-
վորվում է կատարել ուղղակի անձնադուրսն ուսու-
ցելով մուլթ, խոնավ սենյակներում և վճարելով նման
սենյակի համար ամսեկան 10 — 15 ու.վարձ (ԽՂԿան, Վե-
դի, Սիսյան և այլն):

Այս բոլոր փաստերն ասում են այն մասին,
վոր տեղական կազմակերպություններն ուղղակի չեն
ցանկացել ժամանակին գլխավորել պարտադիր ու-
սուցման պոլիտեխնիկական կրթության և անգրագի-
տության վերացման վողջ աշխատանքները. ընդհակա-
ռակը՝ պարտ ուսի կամպանիան շատ դեպքերում դիտ-
վեց, վորպես շատ սովորական և ժամանակավոր կամ-
պանիա. ավելին, — աջ ուղղորդունիստները պրակտիկա-
յով այնքան ստանձարձակ դրսևորեցին իրենց աշխա-
տանքներն այս ֆրոնտում, վոր հաճախ ձուլվեցին
գասակարգային թշնամու մեքենայություններին
պարտ-ուսուցման պրակտիկային յենթարկելու համար:

Չնայած այս բոլոր դժվարություններին, խոչն-
դաններին և արգելակներին այնուամենայնիվ մենք
այսոր արձանագրում ենք բավական խոշոր նվաճում-
ներ այդ ասպարիզում:

Դա բացատրվում է նրանով, վոր բանվոր դասա-
կարգին և աշխատավոր գյուղացիությանը կուսակցու-
թյան անմիջական ղեկավարությամբ հաջողվեց շար-
դել դասակարգային թշնամու կողերը, ինչպես նաև
արժանի հակահարվածը տվեց դասակարգային թշնա-
մու ջրագացի վրա ամեն ուր ջուր լցնող աջ ուղար-
այունիստների ու պանիկյորների քայքայիչ աշխա-
տանքներին պարտ-ուսուցման ֆրոնտում:

Պարտադիր ուսման պլանի 102,8 տոկ. կատա-
րումը լավագույն ապացույցն է դրա:

ՊԵՏԲ Ե ՍՏԵՂԾԵԼ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՍՈՒՐ ԲԱԶՍ ՊԱՐ- ՏԱԴԻՐ ՈՒՍՄԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԱՍՐԱԳՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Կասկած չկա նրանում, վոր կուսակցության
մարտական դերեկտիվները պարտադիր ուսուցման
կենսագործման ուղղությամբ այս 4-5 ամսվա ընթաց-
քում խոշոր հաջողություններ են ձեռք բերվել Հայաս-
տանում:

Սակայն մեզ թվում է, վոր այն բազմաթիվ տե-
ղեկությունները և ինֆորմացիաները, վորը շարունակ
ստացվում են տեղերից պարտ. ուսի ներկա վիճակի
մասին, հաստատում են այն փաստը, վոր ձեռք բեր-
ված նվաճումներն ինչքան էլ նրանք խոշոր լինեն,
դրանք առաջժամ քանակական նվաճումներ են և դեռ
շատ հեռու լին վորակական նվաճումներ լինելուց:
Ավելին — յեթե այսոր բոլոր գծերով (Կուս., ԼԿՅԵՄ
պրոֆ, կոոպ. ցեցեստական և վողջ խորհրդային հասա-
րակացության, ձեռք չառնվին կտրուկ միջոցառում-
ներ, չկատարվի վճռական չրջադարձ ձեռք բերված
նվաճումները կազմակերպչորեն և վորակապես ամրա-
պնդվելու ուղղությամբ, լեղած նվաճումները տանուլ
կտանք և պարտուսը Հայաստանում կյենթարկենք
պրակտիկ:

Խնդիրը միայն նրանում չի կայանում, վոր ցուցակագրել չերեխաներին և ընդգրկել նրանց դպրոցում, դա շատ քիչ է, դա աշխատանքի միայն մի մասն է, դուցե և ամենահեշտը. ծանրության կենտրոնն այսօր այն է, վոր մենք ձեռք առնենք բոլոր հնարավոր միջոցները, ապահովելու պարտ. ուսումը ամբողջ քառամյակում և նյութական լայն հնարավորություններ ստեղծել դպրոցական նորմալ պարապմունքների համար: Այս ասպարիզումն է ահա, վոր մենք ունենք լուրջ ճեղքվածքներ և խոշոր թերություններ:

Վորոնք են դրանք՝ ա) չբավոր աշակերտության թնապահով վիճակը. բ) դպրոցական շենքերի պակասը և դպրոցական շենքերի շինարարության յետ միայլ ժողովրդական լուսավորության դարգացման տեմպերից. գ) դպրոցական կահավորման անմխիթար դրությունը:

Միանգամայն պարզ է, վոր պետական միջոցներով բյուջետային կարգով միայն հնարավոր չէ մտադա ժամանակաշրջաններում լայն նյութական մատերիալ բազա ստեղծելու նշված ճեղքվածքներն ու թերություններն արագ կերպով վերացնելու և ապահովելու պարտ-ուսը:

Այստեղ անհրաժեշտ է խորհրդային վողջ հասարակացության, հատկապես արհեստակցական, տնտեսական և կոոպերատիվ կազմակերպությունների, ինչպես նաև պարտադիր ուսման շեֆ-կոմսոմոլի, ուսուցիչական ոգնությունը

Պարտադիր ուսման ֆինանսական պլանը

Ժողովուրդը և պարտուսի հան-
րապետական կոմիտեն պարտուսի 1931
թվի ֆինանսական պլանը հաստատել և
այդ զուամբը ըստ դպրոցների տեղե-
քի տրամադրվում է այսպես

9,641,100 ռ.

Առաջին աստիճանի և դեռահասների դպրոցներին	Ընդամենը	Վորից չե- նարարու- թյան համար
7,142,500 ռ.	1,700,000 ռ.	
7-ամիա դպրոցներին	985,000 ռ.	150,000 ռ.
Կոլխոզյան դպրոցներին	1,513,600 ռ.	250,000 ռ.
Ընդամենը	9,641,100 ռ.	2,100,000 ռ.

Այս զուամբը կազմված է հետևյալ աղբյուրներից՝

- 1) Տեղական բյուջե 5,141,100 ռ.
- 2) Ինքնահարկման զուամբներից 750,000 ռ.
- 3) Կուլտ շինարարության նոր, նպատակային
ֆոնդից 1,250,000 ռ.
- 4) Հանրապետական, տնտեսական, կոոպերատիվ և
հասարակական կազմակերպությունների մի-
ջոցներից 1,000,000 ռ.
- 5) Խորհրդային Հայաստանում դանվող ֆեդերատիվ և
հանրապետական տնտեսական կազմակերպու-
թյունների միջոցներից 1,500,000 ռ.

9,641,100 ռ.

Ահա այն պլանը, վորի ապահովման համար անհրաժեշտ է լարված և համառ աշխատանք: Այստեղ անհրաժեշտ է, վոր մեր տնտեսական կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունները բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնեն ապահովելու պարտուսը ֆինանսապես, ամուր բազա ստեղծելու կուլտուրական աշխատանքների լայն ծավալման համար:

Ամենալուրջ խնդիրը, վոր այսօր դրված է մեր առաջ պարտուսի ապահովման տեսակետից դա չքավոր աշակերտության ուսման ապահովումն է ամբողջ քառամյակում և լոթամյակներում՝ քաղաքներում ու բանվորական վայրերում: Այսօր մենք կանգնած ենք այն փաստի առաջ, չեք չքավոր աշակերտը տնտե-

սական անապահով դրութեան հետեանքով մաղվում ե
ղպրոցներէց, կանոնաւոր չի հաճախում պարապմունք-
ներէ, լավ չեն սովորում և այլն, անաթե ինչ են
դրում շրջաններէց ալդ անթիւ՝ «Զքավոր աշակեր-
տութեան դրութիւնը միտեմք աշակերտ չե, տէլոր, վո-
տարորիկ յերեխաներ չեն ցանկանում դպրոց գալ և
բարվոք են համարում նստել թոնրի կողքին ու վեճ-
խաղալ»։ (Նոր-Բաղադետ)։ Մի ուրիշ շրջանից դրում են՝
«Կան բազմաթիւ դեպքեր, յերբ չքավոր աշա-
կերտները հազուադէպ և վտանամանի պատճառով մի-
փոքր ցրտի և ձյան հետեանքով շարաթներով, նույն-
իսկ ընդմիջաւ հեռանում են դպրոցից»։ (Աշտարակի
շրջան—Ոջական, Բյուրական, Ղզլթամուր և այլն)։
Փորձն անտեղ ե հասել, վոր Բյուրականի դպրոցի-
վարիչն իրեն հաշվով չքավոր աշակերտներէց մեկին
գնել ե մեկ դուլդ վտանաման, մի դէյրա, և ալդ աշա-
կերտունին «խոսք ե օվի, վոր այլեւս դպրոցից չի բա-
ցակալի յեւլ. սիւսեմասիկ կհանախի դպրոց»։ Հազարա-
վոր նման փաստեր կարիլի յե արձանագրել Հայաս-
տանի բոլոր դպրոցներում։ Ինչ են պտում այս փա-
տերը, այս փաստերը վկայում են այն մասին, վոր
մեր տեղական կազմակերպութիւնները, հատկապես
կոոպերացիան և գյուղխորհուրդները իրենց մտահո-
գութեան առարկա չեն դարձրել չքավոր աշակերտու-
թեան ուսման գործը։ Հալկոպը, վորի վրա ընկնում
ե խոշոր պարտականութիւն աշակերտութեան մատու-
կարարման ու սնունդ նախաճաշիկների կազմակերպ-
ման գործը, մինչև որս ալդ ուղղութեամբ շատ քիչ
բան ե արել։ Հալկոպը չափազանց բոլորակրատական
և հանցավոր մոտեցում ունի դեպի դպրոցականները

սննդի կազմակերպման ու մատակարարման խնդիրնե-
րը։ Հալկոպի գործերում չափազանց շատ կան հրա-
հանգներ տեղերին նախաճաշիկների կազմակերպման,
աշակերտներին կողմնորոշում ու հագուստեղէնով բա-
վարարելու անթիւ, բայց չկա, բացակայում ե կոնս-
րու, հսկողութիւն, թե ինչ ե կատարվում տեղերում
և տեղական կազմակերպութիւնները վորքանով են
կատարում Հալկոպի հրահանգները։ Փաստն այն ե,
վոր այսօր և բանվորական վայրերում, և գյուղական
վայրերում աշակերտութեան ոգնութեան գործը և նրա
սննդի կազմակերպման խնդիրը չի լուծված։ Իսկ շրջ-
գործկոմներն ու գյուղխորհուրդները տեղերում ալդ
խնդիրներին նայում են հենց այնպես «չեղավ լավ,
չեղավ վոչինչ»։ Պետք ե արձանագրել նաե, վոր չքա-
վոր աշակերտութեան սննդի կազմակերպման և նրա
նյութական, կենցաղային դրութեան բարելավման գոր-
ծով շատ քիչ են ներգրավված պրոֆսութիւնները,
ծնողները, կոտնտեսութիւնները և հատկապես սնունդ-
համի միութիւնը։ Անհրաժեշտ ե այս դրութեանը
վերջ տալ և վճռական միջոցներ ձեռք առնել չքավոր
աշակերտութեան ուսման ապահովման համար։ Անհրա-
ժեշտ ե կատարել ներքին միջոցների լայն մոբիլիզա-
ցիա (շարաթորյակներ, կիւնո, թատրոն, ազատ նվի-
րատվութիւն, ինքնահարկումից և կուլտ-կենցաղային
ֆոնդերից վորոշ տոկոսի հատկացում, կուլտ-հեկտար,
դպրոցական հատուկ միջոցներ և այլն)։ Ամեն մի
դպրոց պետք ե ունենա չքավոր աշակերտութեան հա-
տուկ ֆոնդ։ Անհրաժեշտ ե վերջ տալ այն հանցավոր
դրութեան յերբ չքավոր աշակերտութեան համար բոլո-
շիւով հատկացված չնչին գումարները չեն ոգտագործ-

վում ժամանակին, կամ ոգտագործվում են այլ նպատակների համար:

Ձքավոր աշակերտության ապահովման գործում չափազանց մեծ գործ ունեն կատարելու նոստով ու պիտոներական կազմակերպությունները անհրաժեշտ են նրանց լայն ինիցիատիվան, լայն ոգնություն, չքավոր աշակերտության նյութական դրուժյան բարելավման ասպարիզում:

Ձեռք բերված նվաճումները վորակապես ամրացնելու համար վճռական նշանակություն ունի դպրոցի շենքը և կահավորությունը: Դրությունն այս տեսակետից չափազանց վատ է մեզ մոտ: Մեր մի շարք դպրոցները զուրկ են դպրոցական տարրական հարմարություններից, վորից կախված է դպրոցի վորակը: Ինչ վորակ է սպասվում այն դպրոցից, լերը դպրոցը պարագլում է նկուղանման շենքերում, հակասանիտարական պայմաններում, զուրկ գրատախտակից, նստարաններից, սեղաններից: Կան դպրոցներ, վորտեղ 40 աշակերտի համար կա միայն 4 զուգե նստարան—սեղաններ. ամեն մի նստարանի վրա նստում են 5 աշակերտ. կամ դասարանում քարեր են դնում և վրան նստում ու պարագլում: Սրանք չափազանցություններ չեն, այլ մի քանի անգամ տրձանագրված փաստեր են: Ել չենք խոսում պոլիտեխնիկական կրթության համար պահանջվող արհեստանոցների, լաբորատորիաների, թանգարանների բացակայության մասին: Յերբ այսոր խնդիր է դրվում հրաժարվել գրքի ուսուցումից, կամ բերանացի արած խոսքի ուսուցումից և անցնել գլուղլուսավորության վողջ սխտեմը կապելու մեր արագդրությունը, դպրոցը դարձնել նրա որդա-

նակա՞ն մասը, աշակերտին ծանոթացնել արտագրական հիմնական պրոցեսներին, մեքենայի հիմնական մասերին. պատրաստել սոցիալիստական շինարարներ և այլն, ապա պետք է մտածել, վոր այդ բոլորը թղթի վրա չմնան, այլ դառնան ռեալ գործ:

Ինչ խոսք նրանում, վոր պոլիտեխնիկական կրթություն լայն ծավալման ու խորացման համար խոշոր ու վճռական նշանակություն ունի նոր տիպի դպրոցական շինարարությունը, ալդալիսի շինարարություն, վորը համապատասխանի ժողուսավորության սխտեմի վերակառուցման հրատապ պահանջներին: Դժբախտությունը նրանումն է, վոր մեզ մոտ վոչ միայն դեռ չի ձևոնարկվել նման շինարարությունը, այլ և սովորական դպրոցական շինարարությունը (յերկու-չերեք կոմպլեկտանոց դպրոց միայն դասաբաններով) չափազանց յետ է մնում ժողուսավորության դարգացման տեմպերից:

Լուսժողկոմատի տեխնիկական մասի տեղեկություններից պարզվում է, վոր Հայաստանում այս 10 տարվա ընթացքում տարրական դպրոցների համար դպրոցական նոր շենքեր են շինվել ընդամենը մոտ 384 հատ, հաշված նաև մինչև այժմ կիսավարտ մնացած շենքերը:

Յեթե հոմեմատելու լինենք նույն դպրոցական ցանցի աճումը, նոր դպրոցների կազմակերպումը, դրդրոցա-շինարարության աճման հետ, կստացվի հետևյալ պատկերը.

1920 թ. մինչ՝ 1931 թ. դպրոցական ցանցն աճել է 185⁰/₁₀₀-ով, աշակերտությունն աճել է 274⁰/₁₀₀-ով շենքերն աճել են միայն մոտ 35⁰/₁₀₀-ով: Պարզ է, վոր

այդ դրութեան ալլա հանգուրժել չի կարելի: Պետք է, այժմվանից իսկ ձեռնարկել դպրոցա-շինարարական լայն աշխատանքներին, այն հաշվով, վոր բոլոր գյուղերում մենք ունենանք պոլիտեխնիկական կրթութեան պահանջներ բավարարող նոր տիպի դպրոցական շէնքեր և դպրոցական կահավորում:

Ըստ Լուսժողովուրդի շինարարական պլանի 1931 թ. շինարարութեան մեջ ներդրվելու յե 2.100.000 ռուբ., վորից դպրոցական նոր շինարարութեան համար 1.866.000 ռ., և հիմնական վերանորոգման համար 234.000 ռ., դպրոցները անհրաժեշտ կահավորումով ապահովելու համար անհրաժեշտ են՝ 34.600, աշակերտական սեղան-նստարաններ—2010 կոմպլեկտ, ուսուցչական սեղան-աթոռներ—2010, դասարանային գրաստիտակներ և 2010 դպրոցական պահարաններ: Այս կահավորումն ապահովելու համար պահանջվում է 1.219.110 ռ.: Այսպիսով դպրոցական նոր շինարարութեան և կահավորման համար 1931 թ. անհրաժեշտ է ներդնել 3,319,110 ռուբլի: Հիշյալ շինարարութեանը ապահովելու համար պահանջվում է հետևյալ շինանյութերը՝ անտառանյութեր—կլոր գերաններ—4082,35 խոր. մետր, սղոցած անտառանյութ—9275,51 խոր. մետր, մեխ—35,74 տոնն, տանիքի թիթեղ 81,45 տոնն, սոսինձ 5369,75 կիլոգրամ, ապակի 12217,05 քառ. մետր, ցեմենտ 1.243 տակառ և ալլա: Ամեն կերպ պետք է ապահովել այդ ներդրումը և շինանյութերի ժամանակին ձեռք բերումը, հակառակ դեպքում մենք չենք կարող պարտագիր ուսումը մինչև վերջը ապահովել, մենք չենք կարող կուլտուրական որըստորեւ աճող պահանջները բավարարել:

Անհրաժեշտ է դպրոցական շինարարութեանը, շինանյութերի մատակարարումը դնել առաջին պլանի վրա, մտցնելով այն կարևոր նշանակություն ունեցող շինարարութեան պլանի մեջ և հերթից դուրս մատակարարելով շինանյութերը:

Յեթե այսօր մեր մի շարք շէնքերը կիսավարտ են մնում և չեն ոգտագործվում, ապա դրա պատճառներից մեկն էլ շինանյութերի ձգձգումն ու անպլան մատակարարումն է լեղել: Լուսժողովուրդն այս տարվա դպրոցական շինարարութեանը շինանյութերով ժամանակին ապահովելու նպատակով, «Հայանճառ»-ի հետ կնքել է հատուկ պայմանագիր. մնում է վոր «Հայանճառ»-ը ժամանակին կատարի իր ստանձնած պարտավորություններն, ապահովելու շինարարութեանը շինանյութերով:

Պարզ է, վոր այս բոլոր ձեռնարկումները եֆֆեկտ կտան 1931-32 ուսումնական տարում. իսկ մինչ այդ անհրաժեշտ է այսօր ամեն գնով ապահովել պարտուր դպրոցական շէնքերով և կահավորութեամբ: Դրա համար անհրաժեշտ է տեղում անշեղ կերպով կենսագործել ժողովուրդի վորոշումը դպրոցական պիտանի շէնքերը կուլակաթափվածների ու ապակուլակաղվածների բնակարանները անհապաղ հանձնել դպրոցների կարիքներին: Կազմակերպել նորոգիչ բրիգադաներ դպրոցական սեղան-նստարանների, շէնքի նորոգման, սարքավորման համար: Անհրաժեշտ է առավելագույն չափով ոգտագործել բանվորական շէֆութեանը գյուղական դպրոցների վրա: Ամեն մի խորհ. տնտեսութեան և կոլեկտիվ տնտեսութեանը պետք է շահագրգռված լինի իր գյուղի դպրոցական

շինարարութեան, կահավարութեան խնդրով, վորովհետեւ պարտադիր ուսման ապահովումը, դպրոցական նախապատրաստութեան, անդրագիտութեան վերացման պլանի կատարումը լավագոյն ազդակն է կորտնտեսութեան ամրապնդման և կոլտնտեսութեան նոր վերելքի համար:

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ԴԱՐՁՆԵԼ ՄԱՍՍԱՅԱԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ

Յերբ մենք արձանագրում ենք, վոր մինչև որս պարտուսի գծով ձեռք բերված զգալի հաջողութիւնները կրում են քաղաքական բնույթ և շատ հեռու լին վորակական ցուցանիշներ լինելուց, ապա այստեղից պետք է հանել այն միակ յեղրակացութիւնը, վոր ներկայումս մեր առաջ դրվում է խնդիր.— պայքարել վերակական ցուցանիշների համար, պայքար ձեռք բերված նվաճումները վորակապես ամրապնդելու համար, պայքար դպրոցը սոցիալիստական տնտեսութեան զարգացման բարձր տեմպերի իսկական գործոն դարձնելու համար: Դա միայն այն ժամանակ է հնարավոր, յեթե մենք ի վիճակի լինենք պարտուսի պոլիտեխնիկական կրթութեան և անդրագիտութեան վերացման աշխատանքները դարձնելու մասսայական քաղաքական լուրջ կամպանիա: Յեթե այսօր պարտուսը վորոշ տեղերում պրավալի տակ է, ապա բացատրվում է նրանով, վոր պարտուսը չի դառել աշխատավոր լայն շարանների սեփականութիւնը հատկապես ազգային փոքրամասնութիւնների շրջանում: Անկասկած դրութիւնն ավելի լավ, հաջողութիւններն ավելի շատ

կլինիլին, յեթե մենք կարողանայինք մաքսիմալ չափով մոբիլիզացիալի յենթարկելու հասարակական կազմակերպութիւնների, տնտեսական պրոֆ. կոոպ. որդանների ինչպես նաև խորհրդային վոլջ հասարակայնութեան ակտիվ ու գործունէ մասնակցութիւնը պարտուսի ու անդրագիտութեան վերացման ֆրոնտի աշխատանքներին:

Ինչ կասկած, վոր մեր ձեռք բերված նվաճումներն անհամեմատ խոշոր կլինելին, յեթե մենք կարողանայինք իր ժամանակին շտապ կերպով վերակառուցել լուս. որդաններն— նրանց աշխատանքի ձև վերն ու մեթոդները, ամրացնելին շրջանները կայուն վորակալ կազմերով և ել ավելի անողոր պայքար ծաւալելին ինքնահոսի, աջակցութիւնով պրակտիկալի դեմ լուսավորութեան ֆրոնտում: Ի՞նչ խոսք, վոր յեթե նման դրութիւնը շարունակվի մեր աշխատանքների լերկորդ ետապում ևս մենք սպասած արդիւնքին չենք կարող հասնել: Այս տեսակետից անհրաժեշտ է պարտադիր ուսման շեֆ կոմսոմոլի հասարակական-տնտեսական կազմակերպութիւնների, կոլկենտրոնի, պրոֆ. սական կազմակերպութիւնների, կոլխոզնիկների, աշմիութիւնների, լուս. որդանների, կոլխոզնիկների, աշխատավոր զուգակցութեան ու բանվոր դասակարգի ստեղծագործական հետազոտութեան ուժերի լայն զորահամալք հանուն պարտադիր ուսման, պոլիտեխնիկական կրթութեան և անդրագիտութեան վերացման աշխատանքների ամրապնդման: Համատարած գրագիտութեան ձեղքվածքները պետք է ծածկվեն ամենակարճ ժամանակամիջոցում, պարտուսը, պոլիտեխնիկական կրթութիւնն ու անդրագիտութեան վերացումը պետք է դառնա մարտական ֆրոնտ, ահա թե ինչպես է խնդրը դրված ներկայումս:

Պարտուսի ապահովման, անգրագիտութեան վերացման պլանի կատարման և պոլիտեխնիկական կրթութեան կիրառման առաջին նախապայմանը դա անողորմ պայքարն է յերկու ֆրոնտի վրա լուսավորութեան ֆրոնտում, հատկապես ներկա շրջանի լուսավորութեան ֆրոնտում ևս գլխավոր վտանգը աջ ուսուցիչների դեմ: Անհրաժեշտ է հայտնաբերել պարտուսին ինքնահոսի մատնող, պարտուսի ապահովմանը խոչընդոտ հանդիսացող բոլոր տարրերին և նրանց, (ով ուզում է լինել) դատական և կուսակցական ամենախիստ պատասխանատվութեան յենթարկել: Դժբախտաբար մինչև որս մեր աշխատանքների պրակտիկայում, պարտուսն ուղղակի պրավալի յենթարկվողներին վոչ մեկը չի ստացել իր արժանի պատիժը: Յեթե հացամթերման և բամբակացանի պլանները վտանգի յենթարկվողները ամենախիստ պատասխանատվութեան են յենթարկվում և մինչև անգամ կուսակցութեանից վտարվում են դատի յեն տրվում, ապա պարտուսը և անգրագիտութեան վերացման պլանները պրավալի յենթարկող անձնավորութեաններից վոչ մեկը մինչև որս ալդ «բախտին» չի արժանացել: Հնայած վոր այդ «բախտին» արժանի անձնավորութեանները մենք շատ ենք ունեցել: Այստեղ անհրաժեշտ է Բանգուլտեսչութեան Կվձ-ի և կոմբիլիներին հատուկ միջոցառումներ նման տարրերի դեմ, վորովհետև պարտուսումն և անգրագիտութեան վերացումն այսորվա մեր մարտական ֆրոնտներից մեկն է, ով վոր թերազնահատում է այդ ֆրոնտը, նշանակում է նա անուղղակի կերպով թերազնահատում է մեր սոցիալիստական վերակառուցման բայլէկկան տեմպերը:

Յերկրորդ նախապայմանը պարտուսի ճեղքվածքները վերացնելու համար. դա տնտեսական, կոռպորատիվ, պրոֆ. և խորհրդային որգանների ընդհուդ մոտեցումն է այդ գործին: Պետք է ընդգծել, վոր ալդ կազմակերպութեանները մինչև որս շատ քիչ բան են արել պարտուսի ամրապնդման համար, նրանք պարտուսին և անգրագիտութեան վերացման պատասխանատու գործին նալել են կողքից: Յեթե այսոր սկսվել է աշակերտութեան, հատկապես չքավոր աշակերտութեան ստսեմ-մարում դպրոցներից, վորը խոշոր չափով վրտանգում է պարտուսումնը, ապա դրա հիմնական պատճառն այն է, վոր մեր տնտեսական որգանները հատկապես Հայկոսպը շատ դանդաղ և շարժվում, ապահովելու չքավոր աշակերտութեան հագուստեղենով, կոշիկեղենով և նրանց սննդի կազմակերպմամբ: Հայկոսպից պահանջվում է ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպել տաք նախաճաշիկներին, բուֆետների գործը դպրոցներում, կանոնավորելու դպրոցականներին հագուստեղենով ու կոշիկեղենով ժամանակին սպասարկելու գործը և արագացնելու տեմպերն այդ ուղղութեամբ:

Հայկոսպն ու Հայտնարկոսպը պետք է նախաձեռնեն կազմակերպելու դպրոցներում կոշիկեղենի վերանորոգման արհեստանոցները, վորի պրակտիկան մենք ունենք մի շարք դպրոցներում գրանով թեթեվացրած կլինի վոտնամանների պահանջը: Պարտուսի և անգրագիտութեան վերացման պլանների կատարման համար խոշոր նշանակութեուն ունի պարտուսի ֆոնդերի կազմակերպման հարցը: Պրոֆմիութեունը, կոմսոմոլը, կոռպորատիվ ու տնտեսական մարմինները,

վորոնք պարտավոր ելին հաստիք մուծումներ անելու պարտական ֆոնդին, մինչև որ քաղցի Հայկոպի և ՀԱՄԽ ի աննշան մուծումներին, չնայած վոչ մի կադ-
մակերպություն այդ մասին չի յեղ մտածել:

Պարտուսի ջեֆ կոմսոմոլը, վոր հակառական գործ ունեի կատարելու այդ խնդրում, մինչև որս համարյա թե վոչինչ չի արել: Ավելին, յեթե այսոր մենք ան-
գրագիտության վերացման պլանի խոշոր թերակատա-
րում ունենք, ապա դա պետք է բացատրել նրանով,
վոր վերոհիշյալ կադակերպությունները շատ քիչ բան
են արել իրենց տրված պլանները կատարելու համար:

Դպրոցների նորմալ պարապմունքներին վտան-
գում են նաև վառելանյութերի խնդիրը. մեր դպրոց-
ների մոտ 70 % -ը պարապում են 7-8 աստիճ. տա-
քություն ունեցող դասարաններում: Մեզ թվում է,
վոր վառելանյութերի պահանջը բավարարելու համար
ընդգործկոմները պետք է տեղերում կազմակերպեն
վառելանյութերի ինքնամատակարարման գործը: Ընդ
մի շարք շրջանի գուրդը հասարակական միջոցներով
ապահովել են դպրոցները վառելանյութերով, նույն
պրակտիկան պետք է կազմակերպել բոլոր շրջաննե-
րում, ապահովելու դպրոցական նորմալ պարապմունք-
ները:

Ամփոփենք. պարտուսի, պոլիտեխնիկական կրթ-
ության ապահովման և անդրագիտության վերաց-
ման 107.000-ի ընդգրկման պլանի կատարման գործը
պետք է գտնա հարվածային գործ և մոտակա ժա-
մանակաշրջանում ծա-կել նկատված ճեղքվածքները,
վերացնել թերությունները, ամբողջ շեշտը դնելով վո-
րակապմունքի ցուցանիշներին վրա. այդ տեսակետից
տնհրաժեշտ է.

1. Ծավալել խիստ պայքար լերկու ֆրոնտի վրա
պարտուսի, պոլիտեխնիկական կրթության և անդրա-
գիտության վերացման աշխատանքներ Ֆրոնտում.
հայտնաբերել պարտուսն ինքնահոսի մատնող և պար-
տուսի կիրառմանը խոչընդոտ հանդիսացող տարրե-
րին, նրանց դատական և կուսակցական պատասխա-
նատվության լինթարկելու համար: Անհրաժեշտ է նաև
անողոր պայքար ծավալել դասակարգային թշնամու
վտանգությունների դեմ, վորոնք ամեն քայլափոխում
խոչընդոտ են հանդիսանում պարտական գործին:
Այս պայքարում պետք է լայն կերպով ներգրավել
լայն խավերին, կոլխոզնիկներին և աշխատավոր դու-
ղացիությունը: Լայն հասարակականություն պետք է
ստեղծվի պարտուսի, պոլիտեխնիկ. կրթության և ան-
գրագիտության վերացման ապահովման շուրջը հատ-
կապես աղքատի փոքրամասնության շրջաններում և
կատարող ռայոններում, աղիտացիայի, պրոպագան-
դայի միջոցով աշխատավորական լայն զանգվածնե-
րում անհրաժեշտ է խորացնել պարտուսի տնտեսական
ու քաղաքական նշանակությունը:

2. Դպրոցներում լայն կերպով պետք է ծավալել
սոցմրցակցությունը, հարվածայնությունը, կուլտես-
տաֆետային ձևեր, հասարակական բուկսիրներ, վո-
րոնք խոշոր աղքատ են դառնալու բարձրացնելու դրա-
րոցների արտագրողականությունը, դպրոցների աշխա-
տանքների վորակը: Անհրաժեշտ է նախաձեռնել ու-
կազմակերպել դպրոցական հարածային ռայոն, հար-
վածային դպրոց և հետևել վոր այդ բոլորը թղթի
վրա ջնսան, այլ գառնան դպրոցական վողջ աշխա-
տանքների մեթոդ: Այս գործում խոշոր դեր ունեն

կատարելու քաղաքի բանվորական դպրոցները, վորոնք պետք է վերցնեն գյուղական դպրոցների շեֆությունը, ոգնելու այդ գործում գյուղական դպրոցներին: Անհրաժեշտ է, վոր քաղաքի բանվորական դպրոցները կազմակերպեն հասարակական բուքսերներ ոգնելու յետընկած շրջաններին գլուղներին:

3. Կյանքի պիտի կոչել շրջագործկոմներին, գյուղ խորհրդներին կից պարտուսի կոմիտեներին, նրանց աշխատանքների մեջ վճռական բեկում առաջացնել կենսագործելու կուս և խորհրդային որգանների վորոշումները պարտադիր ուսուցման անգրագիտության վերացման ուղղությամբ: Խոշոր հիմնարկ-ձեռնարկներում, հասարակական կազմակերպություններում, կոլտնտեսություններին կից անհրաժեշտ է կազմակերպել պարտուսման ու անգրագիտության վերացման ժօանդակող հանձնաժողովներ, վորոնց ամենորյա աշխատանքը պետք է լինի, սխտեմատիկ կերպով ժօանդակելու պարտուսման ապահովման գործին, Կուս և ԼԵՅԵՄ կոնֆերենցիաներում, պլենումներում, ինչպես նաև շրջագործկոմների պլենումներում ու կոնֆերենցիաներում պարտուսի պոլիտեխնիկական կրթության և անգրագիտության վերացման ապահովման խնդիրները հատուկ որակարգի խնդիրները պետք է դարձնել և վճռական շրջադարձ ստեղծելու գյուղըջիջների, գյուղխորհրդների աշխատանքների մեջ ընդհուպ մօտենալու ժողուսավորության այսորվա հրատապ խնդիրների կենսագործմանը:

4. Պոլիտեխնիկական կրթությունը ունալ դարձնելու համար անհրաժեշտ է բոլոր դպրոցները (1-ին աստիճան, 7-ամյա, կոլյերիտ) ամբաղնելու գյուղում

կոլտնտեսություններին, խորտնտեսություններին, մեքենատրակտորային կայաններին, բազային արհեստանոցներին, քաղաքում արտադրական ձեռնարկներին. այդ կապը վոչ թե պետք է կրի ձեռնարկ բնույթ, ալ անհրաժեշտ է այնպես դնել գործը, վոր դպրոցները դառնան արտադրության անբաժան մասը և նպաստեն ինքնարժեքի իջեցման, արտադրողականության բարձրացման, բերքատվության բարձրացման գործին: Կոլտնտեսությունները և գործարանի դիբեկցիաները պետք է առանձնացնեն անհրաժեշտ թրվով վորակյալ բանվորների, ունալ կոլտնտեսականների, վորպես արտադրական հրահանգիչներ բոլոր դպրոցներում: Սրա հետ միասին անհրաժեշտ է արտադրական հիմնարկներին, կոլտնտեսական վարչություններին, սոցկուլտրաժիններին կից կազմակերպել պոլիտեխնիկական կրթության ժօանդակող հանձնաժողովներ. պոլիտեխնիկական կրթության գաղափարները բանվորների, կոլտնտեսիկների և ուսուցչության մեջ մասսայականացնելու համար, անհրաժեշտ է, վոր Լուսժողկոմատը հրատարակի պտպուլար գրականություն, կազմակերպելու կոնսուլտացիոն գործը տեղերում, ուցիոնալ հիմքերի վրա դնի ուսուցչիչների պոլիտեխնիկական վերապատրաստման գործը:

5. Պարտադիր ուսուցման ապահովման խոշոր յեբաշխիքներից մեկը դա չքավոր աշակերտության նյութական կենցաղային ապահովման խնդիրն է. դրա համար անհրաժեշտ է լայն մասսայական կարծիք ստեղծել չքավոր աշակերտության նյութական կենցաղային դրության բարելավման շուրջը, այդ գործում պետք է լայն կերպով ներգրավել ժողանունգ միու-

61,5 տակոյս դրութիւնն տնտեսագ. և տարւածակ. ինչ գնով եւ ուզում եւ լինի մոտակա ժամանակաշրջանում ապահովել պլանը և սոցիալիստական տնտեսութեանը առը 107.000 գրադետ կադրեր, սոցիալիզմի տեղի վիճակները: Հայաստանը 1933 թվի վերջում պետք ե դառնա համատարած գրագիտական յերկիր, դրա համար եւ անհրաժեշտ եւ այդ նպատակով այս ուսումնական տարվա վերջրած տեմպերը ապահովել: Բոլոր արդյունաբերական վայրերում, կոլ. և խորհ. տնտեսութիւններում, այս տարի վաղ մի կիսադրագետ ու անգրագետ մարդ չպետք ե մնա. այս լուրջագր պետք ե լայն մասսայի սեփականութիւն դառնա և կուսակցութեան ղեկավարութեամբ զորահավաք յենթարկել բոլոր կազմակերպութիւններին այդ լուրջագր կենսագործման համար:

Ահա այն խնդիրները, վոր ներկայումս զրգած են մեր առաջ և պահանջում են իրենց արագ լուծումը:

Միմիայն կուսակցութեան ղեկավարութեամբ, աշխատանքների բայրիկ կյան տեմպերի կիրառումով, հասարակական լայն ուժերի մորիլիզացիայով, սոցիալիստական ծավալուն հարձակում գործելով պարտուար անգրագիտութեան վերացման և պոլիտեխնիկական կրթութեան ճեղքվածքների վերացման ուղղութեամբ, անողոր պայքար մղելով յերկու ֆրոնտում, առաջին հերթին ժողովրդավորութեան ֆրոնտում նույնպես գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքման դեմ, ինքնահոսի դեմ, մենք կը կարողանանք արագ կերպով վերացնել լուսֆրոնտի ճեղքվածքները և կը կենսագործենք 16-րդ կուս համագումարի վորոշումները կարճ ժամանակամիջոցում: Յեր յերկիրը դարձնելով համատարած գրագիտութեան յերկիր:

Գ Ր Ա Պ Ա Ն

ՀՀ Ազգային գրադարան



NL0927561

121-1

3146

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (1³/₄ մանգոյ)



Դ. ԽԱՇԱՏՐՅԱՆ

Ու ընտրուած յայտնիքներ

Գոսիզատ ՍՍՐ Արմենի
Երևան—1931